ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

1980 թվականի ապրիլին մահվան հիսնամյակն էր Երուսաղեմի հայոց պատրիարք, լուսահոգի և մեծանուն Տ. Եղիշե արքեպ. Դուրյանի (1921—1930) և ծնընդյան երկուհարյուրամյակը դարձյալ, Երուսաղեմի երջանկահիշատակ Տ. Զաքարիա պատրիարք Կոփեցու (1840—1846), որը 1843 թվականին հիմնադիրն էր եղել Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանի:

Սույն զույգ հոբելյանների առիթով Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե Տերտերյան սրբազան պատրիարքի նախաձեռնությամբ և հովանավորությամբ հոբելյանական տոնակատարություններ և հոգևորականների խորհրդակցություն են կատարվել Երուսաղեմի հայոց վանքում օգոստոսի 3—10 օրերին:

Հոբելյանական հանդիսություններին պատրիարք սրբազան հոր կողմից հրավիրվել էին «Ժառանգավորաց վարժարանին աշակերտած բոլոր հոգևորականները, հանդիսավորապես տոնելու համար հոբելյանը Ժառանգավորաց վարժարանի հիմնադրին և Մեծ Աղետեն հետո նույն վարժարանը վերաբացողին»:

Հանդիսությանը ներկա են եղել Թուրքիայի հայոց Տ. Շնորհք պատրիարք Գալուստյանը, Տ. Սիոն, Տ. Սերովբե, Տ. Հայրիկ, Տ. Պսակ, Տ. Կոմիտաս, Տ. Թորգոմ, Տ. Շահե, Տ. Տիրայր, Տ. Զավեն, Տ. Գարեգին արքեպիսկոպոսները, 26 վարդապետներ և աբեղաներ ու 8 քահանա հայրեր:

Խորհրդակցությունից առաջ իր ապրիլ 5 թվակիր նամակով Տ. Եղիշե սրբազան պատրիարքը տեղյակ էր պահել Ամենայն Հայոց Հայրապետին՝ «որ խորհրդակցական ժողով պետք է գումարվի, մասնակցությամբ Ժառանգավորաց վարժարանի նախկին սաներուն, քննարկելու համար մեր Եկեղեցիին ներքին հարցերը, նյութ ունենալով «Մեր Եկեղեցիին առաքելությունը այսօր...»: Վեհափառ Հայրապետը ոգևորությամբ ողջունեց այս նախաձեռնությունը և Իր կողմից նշանակեց չորս պատգամավորներ, բոլորն էլ Երուսաղեմի նախկին սաներից, այդ թվում՝ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և Տ. Մովսես քհն. Ղազարյանը, որոնք մասնակցեցին Երուսաղեմի միաբանական խորհրդակցական ժողովին:

Միաբանական ժողովը գումարվել է Ալեքս-Մարի Մանուկյան Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի նորակառույց հանդիսությանց սրահում:

Ժողովը բացվում է ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր աղոթքով: Ապա տեղի է ունենում ժողովի դիվանի ընտրություն: Ատենապետ է ընտրվում Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը: Ընտրվում են նաև ժողովի քարտուղարություն, հանձնաժողովներ և խմբագրական մարմին:

Խորհրդակցությանը փոխնիփոխ նախագահում են Երուսաղեմի և Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքները:

Ժողովի բացումից և դիվանի ընտրությունից հետո առաջին խոսքը տրվում է Դերագույն հոգևոր խորհրդի անդամ և Ա-

բարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանին, որն ընթերցում է Հայոց Հայրապետի 28 հուլիս թվակիր ողջույնի խոսքը՝ ուղղյալ միաբանական համագումարին (Հայոց Հայրապետի խոսքը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Համագումարն իր որդիական երախտագիտությունն ու շնորհակալությունն է արձանագրում հայրապետական հոգեշեն ու բովանդակալից խոսքի համար, և, հանուն բոլոր ժողովականների, Տ. Եղիշե և Տ. Շնորհք պատրիարքները Մայր Աթոռ են ուղարկում հետևյալ հեռագիրը.

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ժառանգավորաց վարժարանի հոգևորական քառասունհինգ սաները հավաքված Երուսաղեմի վանքին Ասեքս և Մարի Մանուկյան սրահին մեջ, հարգանքով ունկընդրեցին Ձերդ Վեհափառության պատգամը: Ուրախությամբ և խանդավառությամբ լեցվեցան մեր հոգիները լսելով Ձեր հայրական խոսքը, թելադրությունները, մտահոգությունները և հույսերը՝ բխած Եկեղեցվո սրտեն և հայրենիքի երազեն: Կվստահեցնենք Ձերդ Վեհափառությունը թե Ս. Էջմիածինի խորհուրդը և հայրենիքի զգացումը ուղեցույցն են մեր խորհրդածություններուն:

Որդիական ակնածանոք՝

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ
ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ

Այնուհետև ժողովը զբաղվում է օրակարգի հարցերի քննությամբ և «գլխավորապես այս օրերու մեր Եկեղեցիի առաքելությամբ: Ավետարանի քարոզությամբ սերմանված հավատքը, Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով սրբագործված Մյուռոնը, Արարատյան հողին վրա կանգնած լույսի խորան Ս. Էջմիածինը, մեր հայրերու անխախտ հավատարմությունը Քրիստոսի փրկագործ խաչին, գծեցին հայոց պատմության իրական ուղին առ Աստված բարձրացող: Կենսունակ պահել մեր հայրերու հավատքը և ամրապնդել մեր ժողովուրդի հավատարմությունը Ս. Խաչին և Ս. Ավետարանին, եղավ ժողովականներու խորհրդածություններուն կարգախոսը»:

Բոլոր ժողովականների սրտի բուռն բաղձանքն է եղել մեր Եկեղեցու դերին զորացումը ա՛յսօր հայ կյանքից ներս: «Եկեղեցիին ներազդեցությունը,—նշել են ժողովականները իրենց մտահոգությունների մեջ,—հայեցի կրթության մեջ և կապը իր ժողովուրդին հետ թուլցած է»: Ժողովական հայրերը միջոցներ են որոնել «այսօրվան պայմաններուն մեջ ամրապնդելու համար հավատքը ի Քրիստոս և մեր ժողովուրդին ուխտը առ Աստված, կնքված մեր նահատակներու արյունով»:

Խորհրդակցության ընթացքում, օրակարգի հարցերի քննարկման ժամանակ, համագումարն արձանագրել է նաև «հոգևորականության զանցառումները իրենց պարտականության մեջ: Անկարգություններ, անկանոնություններ, կազմակերպության պակաս, անհանդուրժողություն, գործակցության թուլացում և այլ թերություններ նշվեցին իբրև իրականություններ, որոնց դարմաններ պետք է որոնել»:

Ժողովում նաև «կարծիքներ արտահայտվեցան Եկեղեցիին ներս գերիշխող աշխարհականացած մտայնության մասին, որ արդյունքն է Եկեղեցիին դուրս գտնվող կազմակերպություններու ազդեցության, վնասելու աստիճան հավատացյալներու և եկեղեցական իշխանության համերաշխ գործակցության»:

Այս մտածումների լույսի տակ «անհրաժեշտ նկատվեցավ ստեղծել կանոններու նոր հավաքածո մը, որ ճշտե իշխանության զանազան աստիճանները ազգային-եկեղեցական կյանքեն ներս, սահմանե նոր կանոններ մեր ժամանակներու ընկերային և բարոյական կյանքին պարտադրած հարցերուն պատասխանելու համար, նպատակ ունենալով անխախտ պահել հայ նկարագիրը և պաշտպանել մեր ժողովուրդը՝ օտարացման վտանգին դեմ»:

Համագումարն անհրաժեշտ է գտնում նաև ստեղծումը «մասնագետ եկեղեցականներե և աշխարհականներե մարմինի մը, պատրաստելու համար **Հայաստանյայց Եկեղեցվո կանոնագիրք մը»,** յոթ կետերից բաղկացած, որն ընդգրկի «Հայ Եկեղեցու հանգանակը, ապա ծիսական, վարչական, հոգևորականության և աշխարհականների իրավունքների վերաբերյալ կանոններ, բարոյական և ընդհանուր կանոններ»:

Ժողովում մասնավոր ուշադրությամբ քննարկման նյութ են եղել «հոգևորական ասպարեզին կոչված թեկնածուներու և առհասարակ հայ դպրոցի աշակերտի կրոնական դաստիարակության պարագաները»:

Համագումարը ցավով հաստատում է, որ «մեր ժողովուրդը անհաղորդ կմնա հայ ծեսին և արարողության և հետզհետե կնվազի

Եկեղեցիի պաշտամունքներուն մասնակցողներու թիվը»:

Ժողովական հայրերը «զգացին անհրաժեշտությունը լավագույն կերպով և իրական ապրումով կատարելու խորհրդակատարությունները, աղոթքին կարևորությունը և մեր ժողովուրդին աղոթել սովորեցնելու անհրաժեշտությունը»:

Այս առթիվ քննության առարկա է դարձել «Աղոթագրքի և Մաշտոցի պարունակության հետ կապված հարցեր և եղան գործնական թելադրություններ հայ ծեսը ավելի մատչելի, հասկնալի, ներշնչող և սիրելի ընծայելու համար»:

Միաբանական համագումարը, արտահայտելով ողջ հայ ժողովրդի սրտագին բաղձանքը, շեշտում է կարևորությունը «1915-ի ցեղասպանության զոհերու սրբացումին և անոնց նվիրված աղոթքներու և շարականներու հորինումին»:

Այս մտահոգություններով համագումարը մե՛ր օրերին ևս «զգաց թե Եկեղեցին պետք է շարունակե ազգային իր դերը... և մեր ժողովուրդի և Եկեղեցիի միության հեռանկարը տեսավ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի պայծառացման և ներկա հայրենիքի հառաջդիմության ճամբով»:

Միաբանական ժողովը զբաղվել է նաև 1956 թվականից ի վեր սփյուռքում Հայ Եկեղեցու մարմնի վրա բացված վերքի քննությամբ և մաղթել, որ «վերջ գտնեն Կիլիկիո Աթոռին ոտնձգությունները և վերահաստատվի Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցիի միությունը, Ամենայն Հայոց Կաթողիկոսության հոգևոր հեղինակության ներքև»:

Հոգևորականաց համագումարն իր աշխատանքներն ավարտում է օգոստոսի 10-ին:

Սույն համագումարը որոշում է «իր խորհրդակցություններու արդյունքը ենթարկել Ամենայն Հայոց Հայրապետի հավանության և տնօրինության»:

Ժողովի լիագումար նիստերից բացի ստեղծվում են նաև յոթ մասնավոր հանձնաժողովներ, որտեղ քննության են առնվում այս առթիվ պատրաստված բովանդակալից զեկուցումները:

Հանձնաժողովները մտքերի փոխանակություններից հետո իրենց քննության արդյունքները կամ տեղեկագիրները բերում են լիագումար նիստին ի հաստատություն:

Օգոստոսի 3—10 օրերին, հոբելյանական տոնակատարությունների և խորհրդակցությունների ժամանակ, ընթերցվում են հետևյալ բանախոսություն-զեկուցումները՝

1. **Տ. Եղիշե պատրիարք Տերտերյան,** «Հայ Եկեղեցիի ազգային նկարագիրն ու դերը»:

Տ. Եղիշե պատրիարքի սույն բանախոսությունը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 11:

2. **Տ. Շնորհք պատրիարք Գալուստյան,** «Կարգ և կանոն»:

Տ. Շնորհք պատրիարքի սույն բանախոսությունը ևս տպագրվել է «Էջմիածին» ամսագրի օգոստոսի համարում, էջ 19:

3. **Տ. Սերովբե արքեպ. Մանուկյան,** «Ծես և արարողություն»:

4. **Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյան,** «Հայ կրոնական դաստիարակությունը անցյալին և այսօր»:

5. **Տ. Զավեն արքեպ. Չինչինյան,** «Արտասահմանյան պայմաններու ազդեցությունը Հայ Եկեղեցիի ավանդական կարգ ու սարքին վրա»:

6. **Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյան,** «Զաքարիա պատրիարքի անձը և գործը»:

7. **Տ. Իսահակ ծ. վրդ. Ղազարյան,** «Եղիշե Դուրյան սրբազանի անձն ու վաստակը»:

Երուսաղեմի հայոց պատրիարքության եկեղեցական սույն համագումարի ավարտին ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, հանուն բոլոր ժողովականների, շնորհակալության և գնահատանքի խոսք է ուղղում ամենապատիվ Տ. Եղիշե սրբազան պատրիարք հորը, որը «նախաձեռնողն ու հովանավորը եղավ համագումարին»:

Համագումարի օրերից հետո շքեղ հանդիսությամբ Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքում կատարվում է երջանկահիշատակ Տ. Զաքարիա պատրիարք Կոփեցու ծննդյան 200 և լուսահոգի Տ. Եղիշե պատրիարք Դուրյանի մահվան 50-ամյակին նվիրված հանդիսությունները: